7 (104). ՍՈՒՐՓ ՍԱՐՔԻՍԸ

Կէղնի թաքավորմ ի՝ հրովարտակ կը հանէ, թէ ոյն օր սուրփ Սարքիս բռնեց բերեց քովս ի, ուր կշռնոցով օսկի կիտամ ուրին։ Էտ քաղքի մէջ կար մէ քյասիր մարթմ ի, գերդաստանից շատվոր։

Ըսեց.— Կնիկ, մըր թաքավորն հրովարտակ է հանէ, թէ ոյն օր սուրփ Սարքիս բռնեց բերեց քովսի, ուրին ուր կշռնոցով օսկի կիտամ։ Գիտի էրթամ իմ կշռնոցով օսկի առնիմ, ըսիմ օր ես կը բերիմ սուրփ Սարքիսին։

Ըսեց.— Տո, այ մարթ, դու դո՞ր, սուրփ Սարքիս դո՞ր, դու հ՞ուրից կրնաս սուրփ Սարքիս բերիս. ըշտը օրական կաշխատիս, օրական կապրինք։ Գացիր օսկին բերեցիր, սուրփ Սարքիս լը չը կրցար գտար, էն ժամանակ գլուխտ ի կը ղարգն։

Ըսեց.— Տո, ա՛յ կնիկ, կէրթամ օսկին կբերիմ, քառասուն օր սրոք կառնիմ։ Քառասուն օր ետե յա էշ կը փիտնա, յա իշու տեր։

Ըսեց.— Տո, մարթ, խիամրթին՝ քու մուր քու ճակատ, դու դինաս։

Մարթն հ՝ելավ, գնաց թաքավորի քով, ըսեց.— Թաքավոր, սաղ մնաս, ես կբերիմ սուրփ Սարքիս։

Ըսեց.— Դինա՞ս ինչ պայմանով, եթե սուրփ Սարքիս բերիր. քու կշռնոցով օսկի կիտամ, թէ օր չբերիր, գլուխտ ի կզարգիմ։

Ըսեց.— Թաքավորն ապրած կենա, ընձի քառասուն օր սրոք տուր։

Պայման էրեցին, առավ օսկին ու գնաց։ Տարավ տուն.— Կնիկ, ըսեց, բերեր իմ։

Մեկել օր Հնլան իրիկ կնիկ, գացին բազար, շոր առան էրեխոց, կողինք, ուրանց համար հաց, վերջապես քյասիբ մարթ էր, էտ օսկով ուր Հրմմեն նեղութուն հոգաց։

Էկա՛վ, քառսուն օր թրմմավ։ Մեկ լը բիրդան չափրոներ գացին էտ մարթու տուն, հետ ուրանց մն պզտի տղեմ ի ներս մտավ։ Էտ տան տեր գիցավ, թե չափռնու տղեն էր, չափրոներ լե գիցան, թե էտ մարթու տղեն է։

Ասեցին.— Հ'ելի էրթանք, թաքավոր քրդի կոնչե։ Էտ մարթն Հ'ելավ, կնկաց մնա բարով էղավ, ճժերու էրես պագեց, Հ'ելան գնացին։

Մտան թաքավորի դիվանխանեն, էտ պզտի տղեն լե հետ ուրանց մտավ ներս։ Թաքավորն հարցուց էտ մարթուն.— Դո՞ր է սուրփ Սարքիս։

Էտ մարթը խեղճ-խեղճ վիզն օլրեց դեմի էտ պզտի տղեն (կուզեր ասել՝ ես՞մ)[1]։ Իրեք անգամ հարցուց, իրեք անգամն էլ էտմալ էրեց։

Վերուց թաքավորն ասեց ուր ատենակալին.— Պարոն ատենակալ, մե մարթըմ օր ուր կշռնոցով օսկի տանե, թե սուրփ Սարքիսին կը բերիմ, հիմա չը բերեր է, էտմալ մարդու դիվան ի՞մալ կը կտրիս։

Ատենակալն ասեց.— Էտմալ մարդուն կտոր-կտոր էնել, շշի վրեն շարել, փուռը կոխել։

Վերուց էտ պզտի տղեն ասեց.— Խասպի տղա, խասպի տղա (տղեն գիներ օր էտ ատենակալը խասպի տղա էր)[2]։

Թաքավորը վերուց մեկել ատենակալին հարցուց, թե.— Մե մարթըմ օր թաքավորին խափե, ուր կշռնոցով օսկի տանե, թե սուրփ Սարքիս կը բերիմ, հիմա չբերեր է, էտմալ մարդուն դիվան ի՞մալ կը կտրիս։

Ասեց.— Էտմալ մարթուն կտոր-կտոր էնել, պուտուկն ըլլալ, փուռը տալ։

Պզտի տղեն ասեց.— Ներկրարի տղա՛, ներկրարի տղա՛ (տղեն գիներ, օր էտ ատենակալը ներկրարճու տղա էր)[3]։

Թաքավորն վրա իրեքին հարցուց. էտ ատենակալ լե ասեց.— Թաքավոր ապրած կենա, մե մարթս օր էրթա աստրծուն խափե, քրդի ընչի՞ համար չպիտի խանփե։

---

1 Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։
2 Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։
3 Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

Պզտի տղեն վերցուց, ըսեց.— Աֆֆա՜ըմ, աֆֆա՜ըմ, ասլի եկ, չնսի փաք, բիր սան, բիր շայզադա[1] (էտ լը թաքավորի տղա էր)[2]։

Պզտի տղեն էտ խոսքեն ետև բիրաան կորավ։ Էտ մարթըն էն սահաթ հասկցավ, օր էտ պզտի տղեն չափրոնու տղեն չէր, սուրփ Սարքիսն էր։

Թաքավոր մեկ լը հարցուց.— Տո, ա՛յ մարթ, դու հ՞օրի՞ չըբերեցիր սուրփ Սարքսին։

Ըսեց.— Թաքավորն ապրած կենա, ես քառսուն օր ընկա էտոր ետև, համոզելով-համոզելով ա՜նչաղ բերեցի հանեցի հ՞ուտա, դու օր ընձի կը հարցուցներ, թե սուրփ Սարքիս բերեցի՞ր, ես քըղի քա՜նի գլխով էրի, դու չը հասկցար։ Եթե բերած վախտն ըսենք, թե ահա՜ն, թաքավոր, սուրփ Սարքիսն, դու էրկու հ՞ըրոպե չը կըրնա տեսնե էտոր։ Ես գլխով կէնենք, օր դու լավ մի իշեր, օր չըս կըրցերի գիցի, ես ի՞նչ էնիմ։

Թաքավորն ըսեց.— Գնա՜, ազատ ես։

Մարթն հ՞ելավ, ուրախ գնաց տուն։

---

1 Ցեղը մի հատիկ է, տոհմը՝ լավ, մեկ դու ես, մեկ արքայազնը (Ծ. Կ.)։

2 Բացատրությունը սասցողինն է (Ծ. Կ.)։